
ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ
«Գործիսը՝ 2018 թվականի ԱՊՀ մշակութային
մայրաքաղաք» միջպետական ծրագրի
պաշտոնական փակման արարողությանը

Հարգարժան տիկի՛ն Մակունց

Հարգելի՛ ներկաներ եւ հյուրեր

Միրելի՛ գործեսցիներ

Ուրախ եմ այսօր ողջունել բոլորիդ «Գործիսը՝ 2018 թվականի ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» միջպետական ծրագրի պաշտոնական փակման արարողությանը: Ճիշտ է, ինքս ներկա չեմ եղել դրա հանդիսավոր բացմանը, բայց այդ միջոցառումների մասին հիացական արձագանքները մինչ օրս լսում եմք Սյունյաց աշխարհում:

Այս ծրագրի միայն բացման ու փակման օրերը չէ, որ հետաքրքիր պահեր են պարգեւել. անցած ամիսներին ծրագրի շրջանակներում կազմակերպված ու անցկացված միջոցառումները, տարբեր նախաձեռնությունները մշակութային ակտիվ ժամանց, նոր շունչ եւ աշխուժություն բերեցին ոչ միայն Գործիսին, այլեւ ողջ Սյունիքին ու մեր հանրապետությանը:

Սա հիանալի առիթ է միջոց էր առնչվելու այլ մշակույթների եւ հյուրերին ներկայացնելու մերը: Հուլիս ամսից մինչ այժմ Գործիսը հյուրընկալեց բազմաթիվ արվեստագետների, մտավորականների, հեղինակավոր մարդկանց:

Արվեստի տարբեր ճյուղերին առնչվող նախագծերն իրենց շուրջը հավաքեցին մշակույթը սիրող եւ մշակույթ ստեղծող հանրությանը, համադրվեցին դասականն ու ժամանակակիցը, ազգայինն ու համաշխարհայինը:

Շնորհակալություն եմ հայտնում միջոցառումների կազմակերպիչներին՝ ՀՀ մշակույթի նախարարությանը, Գործիսի համայնքապետարանին, ԱՊՀ մեր

գործընկերներին, բոլոր նրանց, ովքեր ջանք չխնայեցին ծրագրի մասնակիցներին եւ գորիսեցիներին անմոռանալի պահեր պարգեւելու համար:

Բարի՛ երթ ԱՊՀ մշակութային հաջորդ մայրաքաղաքին, եւ հուսով ենք՝
Հայաստանում կրկին հնարավորություն կունենանք հյուրնկալելու այս գեղեցիկ
միջպետական ծրագիրը:

23.11.2018թ.